

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի-Ի ԿՈՂՄԻՑ  
ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ  
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

1. Համաձայն «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի» արժեթղթավորման հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամի/ կառավարիչ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի թիվ Կ/3 որոշման՝ Հիմնադրամը 2016 թվականի մարտի 14-ին կատարեց դրամային և դոլարային պարտատոմսերի արժեկտրոնի վճարում և մայր գումարի մասնակի վճարում ներդրողներին:

- **Դրամային պարտատոմսերի արժեկտրոն:** Հիմնադրամը թողարկված ընդհանուր 44,626 հատ պարտատոմսերի համար հաշվարկել և վճարել է 16,734,750 ՀՀ դրամ գումարի չափով արժեկտրոն՝ հիմք ընդունելով մեկ պարտատոմսի դիմաց հաշվարկված արժեկտրոնը 375 ՀՀ դրամ:
- **Դոլարային պարտատոմսերի արժեկտրոն:** Թողարկված մեկ պարտատոմսի դիմաց հաշվարկվել է 2.125 ԱՄՆ դոլար արժեկտրոն, որը, հիմք ընդունելով ԿԲ կողմից 12.03.2016թ. հրապարակված 490.23 փոխարժեքը, համարժեք է 1,041.73875, իսկ մինչև տասնորդական կլորացման արդյունքում՝ 1,041.70 ՀՀ դրամին: Հիմնադրամը թողարկված ընդհանուր 11,328 հատ դոլարային պարտատոմսերի համար վճարել է 11,800,377.60 ՀՀ դրամ գումարի չափով:
- **Դրամային պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում:** 2015 թվականի դեկտեմբերի 14-ից մինչև 2016 թվականի մարտի 14-ը կատարվել և Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 64,219,019.90 ՀՀ դրամ վարկի մայր գումարի մարում: Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/03/2016թ. հաշվեգրված ծախսերը նվազեցնելուց հետո մատչելի միջոցները կազմել է 80,687,249.1 ՀՀ դրամ, որը հաշվարկված 16,734,750 դրամ արժեկտրոնի գումարը նվազեցնելուց հետո կազմել է 63,952,499.10 դրամ: Ստացված գումարը, որի հաշվին պետք է կատարվի պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում կազմել է ավելի քիչ, քան վճարման ենթակա 64,219,019.90 դրամը, քանի որ վարկերի գծով առկա են հաշվարկված և չվճարված տոկոսագումարներ: Ելնելով մեկ պարտատոմսի անվանական արժեքի և երկրորդ եռամսյակում վճարվող մեկ պարտատոմսի արժեկտրոնի՝ մինչև տասնորդական կլորացման ամհրաժեշտությունից, հաշվարկված և վճարման ենթակա 63,952,499.10 դրամը նվազեցվել է ևս 48,067.10 դրամով և մնացորդային 63,904,432.00 դրամը ուղղվել է պարտատոմսերի մասնակի մարմանը: Հիմնադրամը մեկ պարտատոմսի համար կատարել է 1,432 ՀՀ

դրամ, իսկ ընդհանուր 44,626 հատ պարտատոմսերի համար՝ 63,904,432.00 ՀՀ դրամ մասնակի մարում: Արդյունքում՝ Հիմանդրամը կատարել է 314,587.9 ՀՀ դրամ գումարի չափով պարտատոմսերի մայր գումարի պակաս մարում, քան վճարված վարկի մայր գումարները (մեկ պարտատոմսի համար՝ 7.05 ՀՀ դրամ):

Մատչելի միջոցների հաշվարկը և բաշխումը ներկայացված է Հավելված 1-ում, իսկ Հիմնադրամին փաստացի կատարված վարկի մայր գումարների մարումների բաշխվածությունը ըստ նախաձեռնող վարկային կազմակերպությունների և դրանց շեղումները՝ Հավելված 2-ում:

- **Դոլարային պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում:** 2015 թվականի դեկտեմբերի 14-ից մինչև 2016 թվականի մարտի 14-ը կատարվել և Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 240,954.09 ԱՄՆ դոլար վարկի մայր գումարի մարում: Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/03/2016թ. հաշվեգրված ծախսերը նվազեցնելուց հետո մատչելի միջոցները կազմել է 277,564.75 ԱՄՆ դոլար, որը հաշվարկված 24,072.0 դոլար արժեկտրոնի գումարը նվազեցնելուց հետո կազմել է 253,492.75 դոլար: Ստացված գումարը ավելին է, քան հաշվարկված 240,954.09 դոլար գումարը որպես պարտատոմսի գումարի մասնակի վճարում կատարելու համար: Ելնելով մեկ պարտատոմսի անվանական արժեքի և երկրորդ եռամսյակում վճարվող մեկ պարտատոմսի արժեկտրոնի՝ մինչև տասնորդական կլորացման ամիրաժեշտությունից, հաշվարկված և վճարման ենթակա 240,954.09 դոլարը ավելացվել է 1,011.99 դոլարով և ստացված 241,966.08 դոլարը ուղղվել է պարտատոմսերի մասնակի մարմանը: Հիմնադրամը մեկ պարտատոմսի համար կատարել է 21.36 ԱՄՆ դոլար, իսկ ընդհանուր 11,328 հատ պարտատոմսերի համար՝ 241,966.08 ԱՄՆ դոլար մասնակի մարում: Արդյունքում՝ Հիմանդրամը կատարել է 1,011.99 ԱՄՆ դոլար գումարի չափով պարտատոմսերի մայր գումարի ավել մարում, քան փաստացի վճարված վարկի մայր գումարները (մեկ պարտատոմսի համար՝ 0.09 ԱՄՆ դոլար):

2. Պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսերը փոխարկվել են 8,568 ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսերով, իսկ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերը փոխարկվել են 78.64 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերով:
3. 2016 թվականի մարտի 14-ին պարտատոմսի սեփականատերերին վճարումներ կատարելուց հետո թողարկված 44,626 հատ դրամային պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է 382,355,568.0 ՀՀ դրամ:

4. 2016 թվականի մարտի 14-ին պարտատոմսի սեփականատերերին վճարումներ կատարելուց հետո թողարկված դոլարային 11,328 հատ պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է 890,833.92 ԱՄՆ դոլար:
5. Պարտատոմս/Ակտիվ հարաբերակցությունը դրամային և դոլարային պարտատոմսերի համար կազմում է համապատասխանաբար 88.8% և 87.5%: Ընդ որում 2016 թվականի մարտի 14-ի դրությամբ դրամային վարկերի քանակը 292 է 430,641,686.4 ՀՀ դրամ մնացորդային արժեքով, իսկ դոլարային վարկերի քանակը 253 է 1,017,677.09 ԱՄՆ դոլար մնացորդային արժեքով:
6. 2016 թվականի հունիսի 14-ին Հիմնադրամը կվճարի մեկ դրամային պարտատոմսի համար 321.30 ՀՀ դրամ արժեկտրոն, իսկ մեկ դոլարային պարտատոմսի համար 1.6711 ԱՄՆ դոլար արժեկտրոն:

Տիգրան Կարապետյան



Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչ՝  
«Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն

15 մարտի, 2016թ.

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ  
էական փաստերի եվ տեղեկությունների բացահայտման

**14.03.2016թ. ժամը 00.00 դրությամբ դրամային և դոլարային պարտատոմսերի վճարման համար Մատչելի միջոցների հաշվարկ**

	<b>ԴՐԱՄ</b>	<b>ԴՈԼԱՐ</b>
<b>Դրամական ներհոսք 14/12/15-14/03/16 ժամանակաշրջանի ընթացքում</b>		
Վարկառուների կողմից կատարված վարկի մարումներ ըստ ժամանակացույցի	43,260,852.10	112,452.00
Վարկառուների կողմից կատարված վարկի վաղաժամկետ մարումներ	20,958,167.80	128,502.09
Վարկառուների կողմից վճարված տոկոսագումարներ	17,292,652.80	39,431.81
Վարկառուների կողմից վճարված տույժեր, տուգանքներ	372,250.00	3,228.22
Վարկառուների կողմից վճարված այլ վճարներ	1,213,260.00	-
<b>Ընդամենը ներհոսք</b>	<b>83,097,182.70</b>	<b>283,614.12</b>
<b>Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/03/2016թ. հաշվեգրված կանոնադրությամբ նախատեսված ծախսեր</b>		
Կառավարման վարձ	735,445.38	1,797.22
Ակտիվների սպասարկման վարձ	672,225.68	1,709.88
Շուկա ստեղծողի վճար	143,659.04	364.67
Պարտատոմսերի սեփականատերերի գործակալի վճար	82,524.95	209.86
Պարտատոմսերի ցուցակման և պահպանման վճար	256,853.29	568.09
Արժեթղթերի պահառության վճար	34,434.00	87.41
ԱՄՆ ՄԶԳ երաշխավորության վճար	476,556.73	1,163.96
Բանկային հաշիվների սպասարկման ծառայությունների վճար	8,234.51	147.39
<b>Ընդամենը կատարված և հաշվեգրված ծախսեր (նվազեցումներ)</b>	<b>2,409,933.58</b>	<b>6,047.06</b>
<b>Մատչելի միջոցներ 14/03/16թ. դրությամբ</b>	<b>80,687,249.12</b>	<b>279,145.45</b>

**Մատչելի միջոցների բաշխումը**

	<b>ԴՐԱՄ</b>	<b>ԴՈԼԱՐ</b>
<b>Մատչելի միջոցներ 14/03/16թ. դրությամբ</b>	<b>80,687,249.10</b>	<b>277,564.75</b>
<b>Արժեկտրոնի վճարում բոլոր պարտատոմսի համար</b>	<b>16,734,750.00</b>	<b>24,072.00</b>
Արժեկտրոնի վճարում 1 պարտատոմսի համար	375	2.125
Պարտատոմսերի քանակ	44,626	11,328.00
<b>Մատչելի միջոցներ արժեկտրոնների վճարումից հետո</b>	<b>63,952,499.10</b>	<b>253,492.75</b>
<b>Հաշվարկված վճարման ենթակա պարտատոմսի մայր գումար</b>	<b>64,219,019.90</b>	<b>240,954.09</b>
<b>Պարտատոմսի վճարման ենթակա մայր գումար</b>	<b>63,952,499.10</b>	<b>240,954.09</b>
<b>Ճշգրտում կապված մեկ պարտատոմսի անվանական արժեքի կլորացման հետ</b>	<b>-48,067.10</b>	<b>1,011.99</b>
<b>Պարտատոմսի մայր գումարի վճարում ներդրողներին</b>	<b>63,904,432.00</b>	<b>241,966.08</b>
Մնացորդային սպրեդի հաշվի համալրում	48,067.10	11,526.67

Հավելված 2

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ  
էական փաստերի եվ տեղեկությունների բացահայտման

**Փաստացի կատարված և Հիմնադրամին փոխանցված վարկի մայր գումարների  
մարումների բաշխվածությունը ըստ նախաձեռնող վարկային  
կազմակերպությունների և դրանց շեղումները կանխատեսվածից**

ՈՒՎԿ	Գրաֆիկով սահմանված մարում	Վաղաժամկետ մարում	Ընդամենը մարում	Շեղում գրաֆիկով սահմանվածից	Ազդագրում կանխատեսված մարում	Շեղում ազդագրում կանխատեսվածից
<b>ԴՐԱՄ</b>						
ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ ՓԲԸ	10,646,240.90	628,257.00	11,274,497.90	5.9%		
Գլոբալ Կրեդիտ ՓԲԸ	7,550,284.90	2,328,674.80	9,878,959.70	30.8%		
Գառնի Ինվեստ ՓԲԸ	5,991,503.90	5,568,534.40	11,560,038.30	92.9%		
Նոր Հորիզոն ՍՊԸ	3,347,359.30	126,929.10	3,474,288.40	3.8%		
Կամուրջ ՓԲԸ	15,725,463.10	12,305,772.50	28,031,235.60	78.3%		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>43,260,852.1</b>	<b>20,958,167.8</b>	<b>64,219,019.9</b>	<b>48.4%</b>	<b>50,386,779.4</b>	<b>27.5%</b>
<b>ԴՈՒԱՐ</b>						
Գլոբալ Կրեդիտ ՓԲԸ	24,553.05	14,306.92	38,859.97	58.3%		
Նոր Հորիզոն ՍՊԸ*	63,419.79	112,136.04	175,555.83	176.8%		
Կամուրջ ՓԲԸ	24,479.19	2,059.10	26,538.29	8.4%		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>112,452.03</b>	<b>128,502.06</b>	<b>240,954.09</b>	<b>114.3%</b>	<b>136,093.18</b>	<b>77.1%</b>

\* Նոր Հորիզոն ՈՒՎԿ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Նախաձեռնող) և Հիմնադրամը, առաջնորդվելով և հաշվի առնելով իրենց միջև հարաբերությունները կարգավորող պայմանագրային և օրենսդրական մի շարք դրույթներ, որոնք են՝

- «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա Նախաձեռնողի կողմից «Ակտիվների առուվաճառքի և սպասարկման պայմանագրով» տրված երաշխավորություններն ու հավաստիացումները (այդ թվում՝ վարկերի որակի վերաբերյալ), ինչպես նաև նշված պայմանագրով Նախաձեռնողի կողմից ստանձնած՝ համապատասխան վարկերը հետ գնելու պարտավորությունը,
- Հիմնադրամի կողմից թողարկված ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման ազդագրի 58-59-րդ էջերում շարադրված դեֆոլտ վարկերի սպասարկման հետ կապված պայմանները,

- Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով և 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ սպասարկողի և Հիմնադրամի կառավարչի՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում ակտիվներով ապահովված արժեթղթերի ներդրողների շահերից ելնելով գործելու, իրենց իրավունքները և ներդրողների նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով իրականացնելու և կատարելու ֆիդուցիար պարտականությունը),

ինչպես նաև հաշվի առնելով, որ կան էական խնդիրներ Նախաձեռնողի կողմից վաճառված և սպասարկվող ժամկետանց (դեֆոլտ) վարկերի հետ, որոնք կարող են վտանգել ակտիվներով ապահովված արժեթղթերի ներդրողների շահերը, 2016 թվականի մարտի 11-ին կնքեցին «Ակտիվների հետգնման պայմանագիր»: Պայմանագրով Նոր Հորիզոն ՌԻՎԿ ՍՊԸ-ն Հիմնադրամից հետ է գնել 94,869.54 ԱՄՆ դոլար ընդհանուր մնացորդով 11 (տասնմեկ) ժամկետանց վարկ, որի համար Հիմնադրամին վճարել է 94,869.54 ԱՄՆ դոլար և 2,427,647.80 ՀՀ դրամ (հաշվարկված տոկոսագումարներ և տույժեր):